ԻՆՔՆԱԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ա. Իսաբեկյան.— «Սիրիացի ուսանողի դիմանկարը»։

Վերջերս Երևանի «Պրոֆեսոր Աբրահամյանի հավաքածու» թանգարանում, այնուհետև Հայաստանի պետական պատկերասրահի Էջմիածնի մասնաճյուղում ցուցադրվեցին երիտասարդ գեղանկարիչ Արամ Իսաբեկյանի ստեղծագործությունները։ Արվեստագետի ավելի վաղ ստեղծած նատյուրմորտները կրում են դասական արվեստին հատուկ կանոնորոշ արտահայտչաձևեր։ Այս կտավներում նկարիչը ձգտում է ամբողջության մեջ շոշափել հորինվածքի կառուցիկությանը, կոլորիտային ըմբռնումներին առնչվող սահմանները։ Իր հայացքն ուղղելով հին վարպետներին՝ Իսաբեկյանը ելնում է մի բարձրագույն հասկացությունից՝ այն է՝ գեղարվեստական արժեքից։

ՆԿԱՐՉԻ անհատական ցուցահանդեսում «Նատյուրմորտ եղջյուրով», «Նատյուրմորտ խնձորներով», «Նատյուրմորտ ձրկներով» և այլ աշխատանքներ մասամբ կրկնելով իրար, միաժամանակ մեկը մյուսի համար հաջորդաբար դառնում են հայտնություն։ Այս ներքին օրինաչափ զարգացման մեջ էլ դանդաղորեն երևան է գալիս նկարչի հեռավոր նպատակը՝ ոչ թե նմանակել, «լավագույն դեպքում կրկնել» հին վարպետներին, որը որքան անիմաստ է, նույնքան և աննհարին, այլ գեղանկարչորեն հագեցած միջավայրում առարկաների ձևերի՝ պարզ հարաբերությունների մեջ բացահայտել արտահայտչական-հուզական կապի նոր հատկանիշներ։ Այս պայմանը նկարչին մղում է առարկաների ձևերի առավել ավարտուն, կատարյալ պատկերման։

Կատարման բարձր տեխնիկան նկարչի համար ինքնանպատակ չէ։ Այն հնարավորություն է տալիս նորովի իմաստավորել առարկայի և գեղարվեստական տարածության ներունակ կապը, նրա նշանակությունը։ Ի տարբերություն առաջին աշխատանքների, որտեղ առարկաները տարածականորեն բնորոշվում են լուսաստվերային նուրբ անցումներով, դանդաղորեն երևակվելով ընդհանուր մուգ խորքից, վերջին՝ «Նատյուրմորտ շեփորով» կտավում առարկաները որոշակիորեն զատվում են խորքից՝ զրկվելով մասամբ տոնային անցումներով միջնորդված կապից։ Այստեղ փաստորեն առարկան նոր որակով է պատկերվում։ Բայց այն կարո՞ղ է արդյոք արվեստագետի համար ինքնաբացահայտման նոր ուղիներ ակնկալել։

Գաղտնիքը, ինչպես նշվեց, պատկերի և տարածական միջավայրի կապի մեջ է։ Վերջինս որպես երևույթ, այս դեպքում իբրև իրական պատկերների գոյատևման պայմանական միջավայր, շատ առաձգական է։ Այն կարող է սեղմվել, հասնելով մինչև դեկորատիվ հարթության, կարող է ընդարձակվել տարբեր պլանների հարաբերություններով, և ամեն դեպքում նույն պատկերը կներկայանա հուզական, իմաստային այլ երանգներով, ինչպես միևնույն բառն է՝ բանաստեղծական տարբեր հորինվածքներում։

Վերը նշված վերջին նատյուրմորտում նկարիչը գեղանկարչորեն հագեցված միջավայրի փոխարեն առաջնությունը տալիս է առարկաների հստակ հարաբերությանը, որը արդեն տարածական սեղմված միջավայրում ձեռք է բերում աննախընթաց գործունություն։ Վերջինս ինքնին նշանավորվում է որպես բուն ստեղծագործության իմաստային զարկերակ և կրելով արվեստագետի հույզերի, ապրումների անմիջական կնիքը՝ կարող է ձեռք բերել և հարաբերական տարբեր աստիճաններ։ Այսպիսով նկարիչը առարկաները դուրս է բերում անմիջական ընկալման սահմաններից՝ շոշափելով նրանց գեղարվեստական մեկնաբանմանն առնչվող ստեղծագործական նոր խնդիրներ, ակնկալելով նաև ինքնաբացահայտման հնարավոր ուղիներ։

Նկարչի աշխատանքների մեջ առանձնանում է դիմանկարների շարքը։ Դրանք դիտողի առջև բացում են կերպարներին համակած հույզերի ինտիմ, ներամփոփ վիճակներ։

Իսաբեկյանի նախասիրած ժանրերից է բնանկարը։ Հիշատակելի են նրա «Բջնի», «Դիլիջան» բանաստեղծական շնչով տոգորված կտավները, մանավանդ «Հին ջրաղաց» աշխատանքը, որը առանձնանալով հույզերի անսովոր խտացումներով՝ ծընունդ է տալիս առավել հայեցողական տրամադրությունների։ Այս աշխատանքը գալիս է և հուշելու, որ բնությունը արվեստագետի համար զուտ պատկերման առարկա չէ, այլ այն, ինչը բովանդակում է ճշմարտության, գեղեցկի հավերժական առեղծվածը, և հնարավոր չէ նրա մեծագույն խորհրդին հասու լինել սոսկ կատարման վարպետությամբ։ Այստեղ արվեստագետից պահանջվում է այն կարևորը, որ ստացել է հենց բնությունից և անվանում ենք շնորհք, տաղանդ։

Այսպիսով, Իսաբեկյանի համար կերպավորման դասական ձևի հնարավորությունները սպառված չեն։ Երիտասարդ գեղանկարիչը իր ստեղծագործական որոնումների բնականոն ընթացքի մեջ գեղարվեստական մարմնավորման շարունակ նոր սահմաններ է շոշափում։ Հնարավոր է, որ նա կրկին անդրադառնա ստեղծագործական դասական սկզբունքներին, հնարավոր է, որ ամբողջովին հեռանա։ Որ ուղիով էլ ընթանա, նպատակը մեկն է՝ ծնունդ տալ գեղարվեստական գործի, որի արժեքավորման համար մեկ չափանիշ գոյություն ունի՝ տաղանդը։

Ս. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

«Նատյուրմորտ շեփորով»։